ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 14 փետրվարի 2023թ.

2023 թվականի փետրվարի 14-ին, ժամը 13:30-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով նպատակով ստեղծված սոցիալական, առողջապահության, բնության պահպանության հարցերի մշտական գործող հանձնաժողովի նախագահ Էդիկ Պիճիկյանը, անդամներ Կարապետ Հարությունյանը, Վլադիմիր Վարդևանյանը, Վարդան Սուքիասյանը, աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը, Վարչական իրավախախտումների գծով իրականացվող աշխատանքների պատասխանատու Նոբաթ Շուշանյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը: Բացակա էր հանձնաժողովի անդամ Ավագ Սահակյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1.«Առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին»:

2.«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին»:

3.«Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին»:

4. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 61 և 71 բնակարանները Վարդեն Մայիսի Մելքոնյանին անհատույց օտարելու մասին»:

5. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 75 բնակարանը Ավագ Արամայիսի Ստեփանյանին անհատույց օտարելու մասին»:

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը ներկայացրեց, որ օրակարգի առաջին հարցը՝ ***«Առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին»*** Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1-րդ կետի հիման վրա, որը *սահմանում է առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը (22.00-ից մինչև 7.00-ն, 23.00-ից մինչև 7.00-ն և 24.00-ից մինչև 7.00-ն).*):

Առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից կատարված այն բոլոր գործողությունները, որոնք աղմուկ են առաջացնում և խանգարում են քաղաքացիների լիակատար հանգստությունը, այդ թվում անձնական գործողությունները, մեխանիկական միջոցներով և/կամ տեխնիկական միջոցներով կատարված գործողությունները, հրատեխնիկական արտադրանքի, ներառյալ հրավառության օգտագործումը, համարվում են լռությունը կամ գիշերային անդորրը խախտող գործողություններ, ինչն աջացնում է վարչական պատասխանատվություն:

Որոշվեց՝

1. հավանություն տալ ***«Առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 4 Ձեռնպահ – 0 Դեմ- 0

Էդիկ Պիճիկյան

Կարապետ Հարությունյան

Վլադիմիր Վարդևանյան

Վարդան Սուքիասյան

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին» օրակարգի երկրորդ հարցի շուրջ Լ. Ավուշյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1 կետի հիման վրա :Կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է հաշվի առնելով գիշերային ժամերին լռության խախտման, գիշերային ժամերին իրականացվող հրավառությունների օգտագործման կանոնների խախտումների վերաբերյալ դեպքերը և դժբախտ դեպքերից հնարավորինս զերծ մնալը: Նախագծի հավելվածում առկա կանոնների խախտումն առաջացնում է վարչական պատասխանատվություն: Նախագիծը կրում է նորմատիվ բնույթ:

Որոշվեց՝

2. հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 4 Ձեռնպահ – 0 Դեմ- 0

Էդիկ Պիճիկյան

Կարապետ Հարությունյան

Վլադիմիր Վարդևանյան

Վարդան Սուքիասյան

Լ. Ավուշյանը ներկայացրեց օրակարգի 3-րդ հարցը՝ ***«Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին»:*** Ավագանու որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2 կետի (*Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ 41.2) որոշում է ընդունում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջների վերաբերյալ.*) և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մասի (*3. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանում է համայնքի ավագանին:*) հիման վրա:

Սույն նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ապահովել համայնքի բնակչության

անդորրը: Նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կարգավորելու սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները:

Որոշվեց՝

3. հավանություն տալ ***«Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 4 Ձեռնպահ – 0 Դեմ- 0

Էդիկ Պիճիկյան

Կարապետ Հարությունյան

Վլադիմիր Վարդևանյան

Վարդան Սուքիասյան

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 61 և 71 բնակարանները Վարդեն Մայիսի Մելքոնյանին անհատույց օտարելու մասին» որոշման նախագիծը ներկայացրեց Նոբաթ Շուշանյանը: «Հայապակի» արտադրական միավորման կողմից տրված Միասնական օրդերով Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարանի 142 սենյակը հատկացվել է Վարդեն Մայիսի Մելքոնյանի ընտանիքին:

Վարդեն Մայիսի Մելքոնյանը հաշվառված է և բնակվում է նշված հասցեում:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Վարդեն Մայիսի Մելքոնյանի դիմումը՝ ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 17.62 քմ ընդհանուր մակերեսով 61 և 17.57 քմ ընդհանուր մակերեսով 71 բնակարանները անհատույց օտարել (նվիրել) Վարդեն Մայիսի Մելքոնյանին (ծնված 1956 թվականի սեպտեմբերի 01-ին և սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վարդեն Մայիսի Մելքոնյանի կողմից:

Որոշվեց՝

4. հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 61 և 71 բնակարանները Վարդեն Մայիսի Մելքոնյանին անհատույց օտարելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 4 Ձեռնպահ – 0 Դեմ- 0

Էդիկ Պիճիկյան

Կարապետ Հարությունյան

Վլադիմիր Վարդևանյան

Վարդան Սուքիասյան

Նոբաթ Շուշանյանը ներայացրեց վերջին՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 75 բնակարանը Ավագ Արամայիսի Ստեփանյանին անհատույց օտարելու մասին»*** ավագանու որոշման նախագիծը: «Հայապակի» արտադրական միավորման կողմից տրված Միասնական օրդերով Բյուրեղավան քաղաքի 1-ին հանրակացարանի 111 սենյակը հատկացվել է Ավագ Արամայիսի Ստեփանյանի ընտանիքին:

Ավագ Արամայիսի Ստեփանյանը հաշվառված է և բնակվում է նշված հասցեում:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Ավագ Արամայիսի Ստեփանյանի դիմումը՝ ավագանին որոշում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 30.41 քմ ընդհանուր մակերեսով 75 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Ավագ Արամայիսի Ստեփանյանին՝ ծնված 1955 թվականի նոյեմբերի 03-ին, և սահմանել, որ որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ավագ Արամայիսի Ստեփանյանի կողմից:

Որոշվեց՝

5. հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 75 բնակարանը Ավագ Արամայիսի Ստեփանյանին անհատույց օտարելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 4 Ձեռնպահ – 0 Դեմ- 0

Էդիկ Պիճիկյան

Կարապետ Հարությունյան

Վլադիմիր Վարդևանյան

Վարդան Սուքիասյան

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Էդիկ Պիճիկյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կարապետ Հարությունյան